ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

«ՇՄՆ-ԳՀ-ԱՊՁԲ-20/05» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան **« 15 » « նոյեմբերի » 2019թ.**
ժամը 16.00

Մասնակցում էին՝

Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳՊ/ԳԱՊ)	Բացակայում է
Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ)	Մ.Այդինյան
Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ)	Ա Մխիթարյան
Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ)	Գ.Գրիգորյան
Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ)	Մ.Օհանջանյան
Գնման Պատասխանատու/ Մրցույթի համակարգող (ԳՊ/ՄՀմ)	Լ Զոհրաբյան

*Ռ Զոբանյանը բացակայում էր (գործուղում), նիստը նախագահում էր Մ.Այդինյանը·

1. «ՇՄՆ-ԳՀ-ԱՊՁԲ-20/05» ծածկագրով մրցույթի գնահատման արդյունքների ամփոփման նիստի անցկացման վայրը, օրը և ժամը.

(Մ Այդինյան)

1.1 «ՇՄՆ-ԳՀ-ԱՊՁԲ-20/05» ծածկագրով մրցույթի մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի գնահատման արդյունքների ամփոփման նիստը կայացել է 2019 թվականի նոյեմբերի 15-ին, ժամը 16·00-ին, Շրջակա միջավայրի նախարարության շենքում, ք Երևան, Կառավարության 3շ , 5-րդ հարկ 514 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0

2. «ՇՄՆ-ԳՀ-ԱՊՁԲ-20/05» ծածկագրով մրցույթի հրավերով սահմանված կարգով մասնակիցների վերաբերյալ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և եզրակացությունը ստանալու վերաբերյալ տեղեկություններ.

2.1. «ՇՄՆ-ԳՀ-ԱՊՁԲ-20/05» ծածկագրով մրցույթի քարտուղարի կողմից 2019 թվականի նոյեմբերի 11-ին ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն հարցում է ուղարկվել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե կողմից սահմանված ժամկետում ստացվել է եզրակացություն առ այն, որ՝

2.1.1 «Նորմա-պլյուս» ՍՊ ընկերության ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող·

2.1 2 «Պատրոն ՌՄ» ՍՊ ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց պարտավորություններ Հինք ընդունելով Կարգի 47-րդ կետը՝ հանձնաժողովի քարտուղարը, կցելով Կոմիտեի տրամադրած տեղեկատվությունը, նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցել է «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ին առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Կարգի 48-րդ կետի համաձայն «Պատրոն ՌՄ» ՍՊ ընկերությունը սահմանված ժամկետում շտկել է անհամապատասխանությունը՝ ներկայացնելով կոմիտեի տրամադրած տեղեկատվության մեջ նշված գումարի վճարումը հիմնավորող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) օրինակը

3. «ՇՄՆ-ԳՀ-ԱՊՁԲ-20/05» ծածկագրով մրցույթի 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի ներկայացման մասին

(Մ Այդինյան)

3 1. 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից Հրավերի 2-րդ մասի 3.1 կետով նախատեսված փաստաթղթերը էլեկտրոնային ձևով սահմանված ժամկետում ներկայացվել են Շրջակա միջավայրի նախարարության gnumner mnp@yandex.ru էլեկտրոնային փոստի հասցեին

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

4. Հանձնաժողովը որոշեց՝

(Մ.Այդինյան)

4.1. Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ չափաբաժիններ 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9-ով, հաղթող ճանաչել «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ին, չափաբաժիններ 10, 11-ով,՝ «Նորմա-պլյուս» ՍՊԸ-ին·

4.2. Պայմանագրի կնքման նպատակով «ՇՄՆ-ԳՀ-ԱՊՁԲ-20/05» ծածկագրով մրցույթի հաղթող ճանաչված մասնակցին՝ ծանուցել 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի կատարման ապահովում տուժանքի ձևով՝ միակողմանի հաստատված հայտարարություն և վճարման պահանջագիր՝ կնքվելիք պայմանագրի գնի 10 տոկոսի չափով.

4.3 Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

4.4 «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ սահմանել անգործության ժամկետ՝ պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարություն հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0.

5. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները:

Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ)	Մ Այդինյան
Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ)	Ա Մխիթարյան
Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ)	Գ.Գրիգորյան
Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ)	Մ.Օհանջանյան
Գնման Պատասխանատու/ Մրցույթի համակարգող (ԳՊ/ՄՀմ)	L. Զոհրաբյան